75-ՐԴ ՆԻՍՏ

21 մարտի 1919թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 8½-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը*, խնամատարության, ներքին գործոց, պարենավորման, իրավարարության մինիստրները և խնամատարության, լուսավորության ու ներքին գործոց մինիստրների օգնականները:

Օրակարգն է՝

1. Զեկուցում խորհրդարանի նախագահ Սահակյանի՝ Թիֆլիսում ունեցած յուր գործունեության մասին.

2. Փետրվարի 28-ին խորհրդարանում տեղի ունեցած միջադեպի մասին:

Խոնդկարյան - Մեր ֆրակցիան առաջարկում է օրակարգի մեջ մտցնել նախորդ նիստերում թերի մնացած օրինագծերի քննությունը:

Բուդաղյան - Առարկում է Խոնդկարյանին նրանով, որ օրակարգի մեջ կան նշանակված որոշ հարցեր, և միայն դրանց քննությամբ զբաղվել կարող է Խորհրդարանը:

Նախագահ - Չեմ կարող օրակարգի մեջ դնել ուրիշ հարցեր, նախագահության մեջ քննվել է այն հարցը, թե այսօրվա օրակարգի մեջ թերի մնացած օրինագծերը մտնելու* են, թե* ոչ և անհարմար է համարվել դնել: Ուստի և այդ առթիվ վիճաբանությունն ընդհատում եմ և անցնում օրակարգի հարցերին:

Նախագահ - Զեկուցում է, թե ինչպես գնացել է Թիֆլիս, տեսնվել մի շարք պաշտոնական անձանց՝ դաշնակիցների ներկայացուցիչների հետ:

-Միլլին չկարողացա տեսնել, որովհետև նա գնացել էր Բաքում՝ Պոլիս անցնելու համար: Ինձ շատ սիրալիր ընդունեց Ուոկերը, որի հետ խոսակցությունը մի ամբողջ ժամ տևեց: Ես ասացի նրան՝ մեր պահանջն է, մեր Խորհրդարանի, հետևապես ամբողջ ժողովրդի պահանջը՝ հաց, հաց և հաց: Եթե դուք հնարավորություն չեք տա, որ հացը մոտենա ժողովրդին, այն դեպքում ստիպված կլինենք Ալեքսանդրապոլում և այլուր կուտակված մեր գաղթականության մոտեցնել հացին, որ կա մեծ քանակությամբ Կարսում, Շարուրում ու Նախիջևանում:

Նա խոստացավ Կարսից շատ կարճ միջոցում բերել տալ հաց Հայաստանի կարիքների համար: Բիչը խոստացավ անմիջապես մարդիկ ուղարկել մյուս շրջանները ևս ցորեն հավաքելու-գնելու: Բացի այդ, հատուկ մարդ է ուղարկվել Հյուսիսային Կովկաս և Եկատերինոդար հացի համար. կարգադրված է նույն նպատակով և էնզելի:

Կովկասում եղած անգլիական ներկայացուցիչները դիմել են Լոնդոն՝ իրենց կենտրոնական կառավարության, որ եթե հնարավոր է, նա դիմե Ամերիկա՝ հացի համար:

Ամերիկական ներկայացուցիչները իմանալով իմ Տփխիսում լինելը, այցի եկան և ծանոթանալով կարիքների հետ, անմիջապես մարդ ուղարկեցին Պոլիս: Նոքա հայտնեցին, որ մեր ժողովրդի ծանր դրությունը ծանոթ է իրենց և իրենք աշխատում են ամեն կերպ հաց հայթայթել: Երբ նոքա իմացան, որ առանձին

* Այդպես է թերթի այս և հետագա համարներում, պետք է լինի՝ Մինիստր-նախագահի պաշտոնակատարը:-Ծանոթ. կազմ.:

պատգամավորություն է գնալու Ամերիկա պարենի համար, խորհուրդ չտվին՝ ավելորդ համարելով, քանի որ պարենի խնդիրը իրենց պարտականությունն է:

Տեսնվեցի և ֆրանսիական ներկայացուցիչների հետ, որոնք ի միջի այլոց հայտնեցին, որ Ֆրանսիայից արդեն ստացվել է հօգուտ Հայաստանի սովյալների 200.000 ֆրանկ:

Դաշնակիցները Բաքումում ունեն բավականաչափ պարեն ու ապրանք, սակայն Հայաստան անցկացնելու հնարավորություն չունեն՝ ճանապարհները փակ լինելու պատճառով:

Համաձայն ամերիկական և անգլիական ներկայացուցիչների տված տեղեկությանց, Բաքումում մի շաբաթ առաջ ստացված է 300.000 փութ ալյուր, Սալոնիկից՝ 150.000 փութ ալյուր, Ամերիկայից՝ 400 արկղներով կոշիկներ և դեղորայք, էնզելիում գնած և Բաքու բերված է արդեն 55 վագոն բրինձ:

Խնդրեցի անգլիական հրամանատարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների ներկայացուցիչներին, որ հնարավորություն ստեղծեն ուտելու համար դրսից հաց ներմուծելու, իսկ Հայաստանում եղածը պահվի և գործադրվի որպես սերմացու:

Այդ տեսակետը յուրացրին նոքա և հայտնեցին, որ պետք է լուրջ ուշադրություն դարձնել ցանքսի, մանավանդ գարնանացանի վրա: Խոստացան ներմուծվող ալյուրի նորման բարձրացնել այնպես, որ շաբաթական 80 վագոնի փոխարեն թերևս շուտով հնարավոր լինի օրական 20 վագոն ներմուծել: Դաշնակից ներկայացուցիչները մարդիկ են ուղարկել սերմացու գնելու համար Ռեշտ, Ախալքալաք, Նախիջևան, Շարուր, Պարսկաստան: Ես հենց այսօր տեղեկացա, որ հիշյալ տեղերում սերմացուի գնումները կատարվում են շատ հաջող:

Թիֆլիսում Հյուսիսային Կովկասից եկած ներկայացուցիչներից իմացա, որ մինչև օրս դեռ ոչ մի գնում չի կատարվել հացի, չնայած, որ եղել է և' փող, և' ցորեն:

Ինձ դիմում էին զանազան ֆիրմաների ներկայացուցիչներ, որոնց ուղարկում էի պարենավորման մինիստրի մոտ՝ պայմանավորվելու համար: Մինչև մի շաբաթ սրանից առաջ այդ ճանապարհով գնված է 15 վագոն ցորեն, որպիսի քանակությունն անբավարար է, իհարկե:

Այսպես է հացի խնդրի վիճակը: Այդ տեղեկություններն ամբողջական չեն, այլ վերաբերում են որոշ ժամանակաշրջանի: Սակայն տեսակցությունները այս ու այն պաշտոնական ներկայացուցչի հետ բերին այն համոզման, որ հացի գնումները և ներմուծումը շարունակվելու է մեզ համար: Հույս կա, որ Կարսից, Զուրզունայից (Ախալքալաքի գավառ) և մոտիկ այլ շրջաններից հավաքվի նոր՝ ½ միլիոն փութ սերմացու:

Անգլիացիք խոստացան մինչև գարնան դաշտային աշխատանքների սկիզբը տանել-տեղավորել գաղթականությունը:

Ես ուզեցի, որ մեր ժողովրդի ճիչը հասնի մեր մեծ դաշնակից ժողովուրդներին, ուստի և հեռագրեցի Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի պառլամենտներին և խնդրեցի ուշադրություն և օգնություն իրենց փոքր դաշնակցին:

Ես տեսնվել եմ և Վրաստանի պառլամենտի նախագահի հետ և բերել եմ Վրաստանի պառլամենտի ողջույնը Հայաստանի Խորհրդարանին (ծափեր աջից և կենտրոնից):

Մինչև այժմ ես ասել եմ՝ հաց և հաց, սակայն այժմ, վերջացնելով խոսքս, ես ասում եմ՝ ցանքս, ցանքս և ցանքս:

10 րոպե ընդմիջումից հետո նիստը վերսկսվում է նախագահությամբ Սահակյանի:

Կրտսեր քարտուղար - Կարդում է խորհրդարանի նախագահության կազմած արձանագրությունը փետրվարի 28-ի միջադեպի մասին:

Հ. Բուդաղյան - Մեր ֆրակցիան համաձայն է արտահայտվել հիշյալ հարցի առթիվ. միայն նկատի ունենալով, որ դեպքի ժամանակ ամբողջ ֆրակցիան դահլիճում չի եղել, ուստի խնդրում է իրենց ֆրակցիայի ներկայացուցչին ձայն տալ

վերջում, երբ բոլոր մյուս ֆրակցիաների ներկայացուցիչները կարտահայտվեն ու կպարզեն դրությունը:

Խոսեցին դեպքի մասին՝ *Ավդալբեկյան, Մինախորյան, Ստեփանյան:*

Բոլորն էլ մեղադրեցին ու դատապարտեցին ցուցարարներին ի դեմս դաշնակցության և, իբրև պատիժ այդ կուսակցության, կռահեցին նրա մոտալուտ քայքայումը:

Հ. Բուդաղյան - Իրավաբանական վերլուծության է ենթարկում արձանագրությունը և կետ առ կետ հերքում սխալ ու ոչ օրինական հիմնավորումը նրա: Բարոյական տեսակետից էլ արժեք չի ներկայացնի այդ արձանագրությունը, քանի որ կազմված է միակողմանի ու միտումով:

Մինիստր-նախագահ - Այն մեղքը, որ փաթաթում են կառավարության վզին, որ ամբողջ դեպքին ականատես է եղել կառավարության գլուխը և միջոցներ ձեռք չի առել, համարում եմ անտեղի, քանի որ այնտեղ, որտեղ իր իրավունքով խորհրդարանի նախագահը պիտի կարգի հրավիրե ու համապատասխան կարգադրություններ անե, այդտեղ կառավարությանը չի կարելի մեղադրել անտարբերության մեջ: Այդ օրը կարգի հրավիրողը պիտի լիներ խորհրդարանի նախագահը կամ նրան փոխարինողը և ոչ թե կառավարությունը կամ նրա ներկայացուցիչը:

Աղաբաբեկով - Բացատրում է, թե ինչպես է եղել, որ մուսուլմանական ֆրակցիան խոսքադրուժ է եղել դաշնակցական ֆրակցիայի վերաբերմամբ: (Ուժեղացրած դրության օրինագծի քննության ժամանակ):

Գ. Տեր-Խաչատրյան - Իբրև միջադեպի օրը նախագահող տալիս է բացատրություններ:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 12-ին:

«Զանգ», 4 ապրիլի 1919թ.